

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/3

10 մարտի 2015 թ.

Քննարկվեց «Բուֆանիա» ՍՊԸ 26.02.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 29.12.2014 թ-ի թիվ 6106396 ակտի դեմ:

#### «Բուֆանիա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ-ի պետի կողմից 05.11.2014թ. հրապարակվել է թիվ 6204717 հանձնարարագիրը, ըստ որի «Բուֆանիա» ՍՊԸ-ում պետք է կատարվեր հսկիչ գնում:

Մեկ ամիս շարունակ փորձել են կատարել ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտումներ հայնտնաբերելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսուչների նպատակը ոչ թե ընկերության գործունեության օրինականության ստուգումն էր, այլ ամեն գնով խախտում հայտնաբերելը, ուստի որոշվել էր վարվել հետևյալ կերպ.

2014 թ-ի դեկտեմբերի 4-ին ընկերությանը պատկանող խանութ-սրահ է այցելել էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Տ.Գևորգյանը, որը մոտենալով փայտյա կախիչին հարցրել է դրա գինը: Աշխատակցուհին հայտնել է, որ կախիչի գինը կազմում է 40.000 դրամ: Տ.Գևորգյանը 30.000 դրամ թողել է կախիչի մոտ գտնվող լրագրասեղանի վրա և հայտարարել, որ դա կանխավճար է, մնացած 10.000 դրամը կբերի երեկոյան և կվերցնի ապրանքը և շտապ դուրս է եկել խանութից: Պարզաբանման համար հարկ է նշել, որ այդ կախիչը գտնվում է ՀԴՄ-ի գտնվելու վայրից մոտ 25 մետր հեռավորության վրա: Տ.Գևորգյանից անմիջապես հետո, երբ դեռ վաճառողուհին չի հասել ՀԴՄ-ի մոտ, խանութ են մտել երկու անձնավորություններ, ներկայացել որպես հարկային տեսչության աշխատողներ, մոտեցել են ՀԴՄ-ին և պատճառաբանելով, որ ՀԴՄ-ով շահում է եղել, սկսել են կատարել ինչ-որ գործողություններ: Այդ նույն ժամանակ Տ.Գևորգյանը մտել է խանութ, երբ այդ երկու անձնավորությունները դեռևս խանութում էին, մոտեցել է վաճառողուհուն, հայտնել իր ով լինելը և հայտարարել, որ տրված կանխավճարի համար ՀԴՄ կտրոն չի տրամադրվել ու անմիջապես սկսել է գործողություններ կատարել ՀԴՄ-ի հետ՝ առանց հանձնարարագիր ներկայացնելու և իր կողմից կատարվող գործողությունները մեկնաբանելու: Այդ պահին ներքնահարկից բարձրանալով ընկերության տնօրենը տեսել է, որ Տ.Գևորգյանը ՀԴՄ-ի մոտ ինչ-որ գործողություններ է կատարում: Տնօրենի հարցին, թե ով է և ինչ գործ ունի ՀԴՄ-ի հետ, Տ.Գևորգյանը պատասխանել է, որ հարկայինից է և ՀԴՄ է մուտքագրում և ելքագրում իր կողմից հսկիչ գնման ընթացքում տրված 30.000 դրամ կանխավճարի գումարը: ՀԴՄ-ի հետ գործողությունները ավարտելուց հետո տնօրենին է ներկայացվել հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարագիրը: Որից հետո Տ.Գևորգյանը վերցրել է իր փաստաթղթերը և հեռացել:

Սույն թվականի դեկտեմբերի 6-ին փոստով ստացվել է էրեբունու ՀՏ պետի 04.12.2014թ. գրությամբ ուղարկված արձանագրությունը և կից փաստաթղթերը, որոնք զարմանալիորեն ստորագրված էին երեք տեսուչների կողմից, այնինչ դրանցից երկուսը հսկիչ գնմանը չեն մասնակցել:

Այնուհետև փաստային ծառայության միջոցով ստացվել են թիվ 6106396 ակտի նախագիծը, այնուհետև նաև ակտը, որով ընկերությանն է առաջադրվել տուգանք՝ 150.000 դրամի չափով: Ընկերությունը առարկում է նշված ակտը հետևյալ պատճառաբանությամբ:

1. Տեսչության աշխատակիցների համաձայնեցված գործողությունների պատճառով վաճառողուհին հնարավորություն չի ունեցել ՀԴՄ կտրոն տրամադրելու, քանի որ Տ.Գևորգյանի հեռանալուց հետո մինչև վաճառողուհին մոտեցել է ՀԴՄ-ին /փողը թողնվելու

վայրից մինչև ՀԴՄ 25 մետր է/, ՀԴՄ-ին են մոտեցել մյուս երկու տեսուչները և սկսել են գործողություններ կատարել ՀԴՄ-ի հետ, իսկ նրանցից անմիջապես հետո մոտեցել է Տ.Գևորգյանը և արագ-արագ սկսել է իր գործողությունները ՀԴՄ-ի հետ:

2. Տվյալ դեպքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի, նույն օրենքի հավելված 2-ի 1.5 և 1.6 կետերի պահանջները: Մասնավորապես.

ա) տեսուչ Տ.Գևորգյանը «խախտում հայտնաբերելուց» հետո սկսել է կատարել գործողություններ առանց հանձնարարագիր ներկայացնելու, հանձնարարագիրը տնօրենին է ներկայացվել վերջինիս պահանջով:

բ) Վերը նշված հավելվածի 1.6 կետի դրույթներից հետևում է, որ Տ.Գևորգյանը խախտել է վերը նշված օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի պահանջները: Հսկիչ գնում կատարելուց հետո տեսուչի /տեսուչների/ կողմից որևէ արձանագրություն չի ներկայացվել, ինչպես օրենքի պահանջն է, այլ բավարարվել են այն փոստով ուղարկելով, որը օրենքով նախատեսված չէ, քանի որ տնօրենը չի հրաժարվել արձանագրությունը ստորագրելուց: Դա է վկայում այն փաստը, որ արձանագրությունը ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու վերաբերյալ որևէ նշում արձանագրությունում կատարված չէ: Հետևապես օրենքի պահանջով նրանք պարտավոր էին ոչ թե ուղարկել փոստով, այլ ներկայացնել ստորագրման և ստացման:

3. 04.12.2014թ. թիվ 6204717 արձանագրությունը կազմված է գործող օրենսդրության կոպիտ խախտումներով: Մասնավորապես,

ա) Որպես հսկիչ գնման մասնակից գրված է տնօրենի անունը, այնինչ նա հսկիչ գնմանը չի մասնակցել: Այդ տողում պետք է լրացվեր տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառողի անունը, այնինչ նրա անունը արձանագրության մեջ նշված չէ:

բ) Որպես հսկիչ գնում կատարողներ գրվել է նաև Ա.Շահմուրադյանի և Ա.Գրիգորյանի անունները, որոնք հսկիչ գնում չեն կատարել, հետևապես իրենց չկատարած գործողությունների համար ստորագրել չէին կարող:

գ) Արձանագրության բովանդակությունը կազմված է սխալ և սուտ, քանի որ հսկիչ գնման ժամանակ հանդես է եկել Տ.Գևորգյանը, սակայն արձանագրությունում նշվել է. «Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները...»: չ հաշվետվությունը դուրս է բերվել ոչ թե հանձնարարագիրը ներկայացնելուց հետո, այլ՝ դրանից առաջ:

դ) Վերջնամասում որպես ապրանք վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատող գրվել է տնօրենի անունը, սակայն նրան որևէ գումար չի տրվել:

Հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետ ընդունման 04.12.2014թ. թիվ 6204717 ակտը նույնպես կազմված է խախտումներով: Մասնավորապես, որևէ մեկը ակտում նշված տեսուչներից փայտյա հագուստի կախիչ չի վերադարձրել, քանի որ չի էլ գնել: Սակայն ակտում նշված է, որ երեք տեսուչները վերադարձրել են փայտյա հագուստի կախիչ մեկ հատ 30.000 դրամ արժեքով: Այսինքն, տեսուչներին անհրաժեշտ է եղել, ոչ թե օրենքով սահմանված կարգով անցկացնել ուսումնասիրություն, այլ ՀԴՄ-ն զբաղեցնելով թույլ չտալ աշխատակցին ՀԴՄ կտրոն տրամադրել:

Վերը նշված հարցերի պարզաբանման, ինչպես նաև խանութ այցելած երկու անձանոթ տեսուչների ինքնությունը պարզելու և նրանց կողմից կատարված անօրինական գործողություններին գնահատական տալու նպատակով տնօրենի կողմից 27.12.2014թ-ին դիմում-գանգատ է ներկայացվել Էրեբունու ՀՏ պետին, սակայն ոչ մի քննարկում չի արվել և որևէ պատասխան չի ուղարկվել: Փոխարենը կազմվել է վերը նշված ստուգման ակտը և գանգատի հետ միասին ուղարկվել ընկերությանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի խախտումներով կազմված հսկիչ գնման արձանագրությունը չի կարող հիմք հանդիսանալ և դրվել ստուգման ակտի հիմքում, ընկերությունը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 29.12.2014թ. թիվ 6106396 ակտը:

**«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Էրեբունու ՀՏ պետի 05.11.2014 թ-ի թիվ 6204717 հանձնարարագրի «Բութանիա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 04.12.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204717 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

«ՖՆ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Տիգրան Գևորգյանը 04.12.2014 թ-ին, ժամը 12:50-ին ք.Երևան, Սասունցի Դավթի 13, 377 հասցեում գործող «Բութանիա» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից 40.000 դրամ արժողությամբ փայտյա կախիչի համար վճարել է կանխավճար՝ 30.000 դրամ կանխիկ գումար, որը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 12:55-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 30.000 դրամը, ժամը 12:56-ին մուտքագրվել է ՀԴՄ, նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 30.000 դրամի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Բութանիա» ՍՊԸ կողմից խախտվել են «ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ «ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից 08.12.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6106396 հանձնարարագիրը, որի համաձայն «Բութանիա» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է «ՖՆ Էրեբունու ՀՏ 29.12.2014 թ-ի թիվ 6106396 ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Վերը նշված հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձը նշեց, որ 04.12.2014 թ-ին, ժամը 12:50-ին ք.Երևան, Սասունցի Դավթի 13, 377 հասցեում գործող «Բութանիա» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետում 40.000 դրամ արժողությամբ փայտյա կախիչ գնելու համար իր կողմից վճարվել է կանխավճար՝ գումարով 30.000 դրամ, և դուրս է եկել խանութից: Որոշ ժամանակ անց նա վերադարձել է խանութ և ներկայացնելով ծառայողական վկայանք և հանձնարարագիրը վաճառողուհուն հայտարարել է, որ հսկիչ գնման շրջանակում վճարված կանխավճարի դիմաց իրեն չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Այնուհետև, երբ մոտեցել են ՀԴՄ-ին իրականացվող հսկիչ գնման շրջանակներում Z հաշվետվություն դուրս բերելու համար, պարզվել է, որ ՀԴՄ-ն անջատված է: ՀԴՄ-ն միացվելուց հետո դուրս է բերվել Z հաշվետվություն, որի համաձայն հասույթը կազմել է 0 դրամ, ՀԴՄ է մուտքագրվել վճարված կանխավճարի գումարը և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով

իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է:

Քննարկվող դեպքում հսկիչ գնման ընթացքում վճարված խանխավճարի գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ընկերության տնօրենին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե ընդունում է արդյոք հսկիչ գնումն իրականացնող անձի կողմից որպես կանխավճար 30.000 դրամ վճարված լինելու, ինչպես նաև այն ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը, հնչեց պատասխան, որ չի կարող այդ հարցին պատասխանել, քանի որ այդ պահին ներկա չի եղել:

Հանձնաժողովի անդամները նշեցին, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խանութի տարածքը տեսահսկվում է, ուստի ընկերության տնօրենը հսկիչ գնման ընթացքում արձանագրված փաստերն իրականությանը համապատասխանելու հանգամանքը պարզելու համար կարող էր պահանջել վերձանել այդ պահը արձանագրած տեսագրությունը, ինչը սակայն նրա կողմից չի արվել:

Հանձնաժողովի անդամներն ընկերության տնօրենին առաջարկեցին ներկայացնել հսկիչ գնման պահը արձանագրած տեսագրությունը, սակայն հնչեց պատասխան, որ անցել է բավական ժամանակ, հետևապես համապատասխան տեսագրությունը պահպանված չի լինի:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնման ընթացքում կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են վճարված կանխավճարի գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 29.12.2014 թ-ի թիվ 6106396 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ